




**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Գլխավոր տնօրեն



Կ. Հարությունյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ
արտադրատնտեսական աշխատանքի կազմակերպման
առանցքային ուղղություններ
(«Դեբեդ» մասնաձյուղ)**

23.10.2015թ.

16:30

Ներկաներ՝

Կ. Հարությունյան	Գլխավոր տնօրեն
Ա. Թոխունց	Գլխավոր տնօրենի տեղակալ, Իրացման տնօրեն
Դ. Գրիգորյան	Գլխավոր տնօրենի տեղակալ, Տեխնիկական տնօրեն
Կ. Հայրապետյան	Գլխավոր տնօրենի տեղակալ, Անվտանգության և վերահսկողության տնօրեն
Ս. Պողոսյան	Գլխավոր տնօրենի տեղակալ, Ընդհանուր հարցերով տնօրեն
Հ. Փափազյան	Տեխնիկական տնօրենի տեղակալ, օպերատիվ կարգավարական դեպարտամենտի պետ
Գ. Ղազարյան	Տեխնիկական տնօրենի խորհրդական էներգախնայողության գծով
Գ. Սարգսյան	“Դեբեդ” մասնաձյուղի տնօրեն
	“Դեբեդ” մասնաձյուղի տնօրենի տեղակալ իրացման հարցերով
	“Դեբեդ” մասնաձյուղի գլխավոր ճարտարագետ
	“Դեբեդ” մասնաձյուղի տնօրենի տեղակալ ընդհանուր հարցերով
	“Դեբեդ” մասնաձյուղի գլխավոր հաշվապահ

	“Տաշիր” էլ. ցանցի պատասխանատու
	“Թումանյան” էլ. ցանցի պատասխանատու
	“Սպիտակ” էլ. ցանցի պատասխանատու
	“Ստեփանավան” էլ. ցանցի պատասխանատու

ՕՐԱԿԱՐԳ

1. Ընկերության նոր քաղաքականությունը
2. Աշխատանքի կազմակերպման հիմնական մոտեցումները
3. Տեխնոլոգիական կորուստների համապատասխանեցումը Էներգետիկայի ԳՀԻ մշակած նորմատիվներին

ԼՍԵՑԻՆ՝

Գլխավոր տնօրեն Կ. Հարությունյանին.

Ընկերության Գլխավոր տնօրենը ներկայացրեց Ընկերության նոր քաղաքականության որդեգրած ուղղությունները և աշխատանքի կազմակերպման հիմնական/առանցքային հայեցակետերը՝

- ազնվագույն աշխատանք,
- առավելագույն ջանքեր և խստագույն կարգապահություն,
- դեմքով դեպի բաժանորդը,
- օպերատիվ, ոչ բյուրոկրատական աշխատանք,
- հարգանք օրենքի նկատմամբ,
- հարգանք սեփականության իրավունքի նկատմամբ
- էլեկտրական սխեմաների ճշգրտման աշխատանքների կատարում և նրանց համապատասխանեցում Էներգետիկայի ԳՀԻ նորմատիվներին, տեխնոլոգիական գերկորուստների բացառում,
- նշանակվում է էլ. ցանցերի և տեղամասերի պատասխանատուների անձնական պատասխանատվություն չկատարված և վատ ցուցանիշների համար,
- կապված Կառավարության 2015 թվականի օգոստոսի 31- ի թիվ 1030-Ն որոշման փոփոխման հետ (այն է՝ էլեկտրաէներգիայի սակագինը սուբսիդավորվելու է միայն ամսական մինչև 250 կՎ սպառում ունեցող բնակչության մասով)՝ մասնաճյուղերում հարկավոր է կատարել մանրագնին ուսումնասիրություններ և կազմել բնակչության ամենախոցելի մասի ցուցակ՝ խստորեն հետևելով նրանց ցուցմունքների գրանցման ժամանակացույցերին, և անցկացնել վերջիններիս հետ տեղեկատվական, բացատրական աշխատանք,

- աշխատանքների, նյութերի և ծառայությունների ձեռքբերումների մասով բոլոր գործող պայմանագրերը համարվում են ժամանակավորապես դադարեցված, մինչև Անվտանգության և վերահսկողության տնօրինության կողմից ուսումնասիրությունների կատարումը (փոխկապակցված անձանց առկայություն, արժեքների գերազանցում և այլն),
- արգելվում է Ընկերության աշխատակիցների ներգրավումը կապալառու կազմակերպությունների աշխատանքներում,
- սպառողների տեխնոլոգիական միացման աշխատանքները պետք է կատարվեն ժամանակին և պատշաճ որակով (բոլոր անհրաժեշտ գործիքները և ավտոտրանսպորտային միջոցները/ հատուկ տեխնիկական կտրամադրվեն):
- առաջնահերթ է համարվում աշխատանքներում անվտանգության կանոնների պահպանումը,
- Ֆինանսական/հաշվապահական կարգավորումներ. բանկային ճշտումների վերջին օր է սահմանվում յուրաքանչյուր ամսի 2-ը, հաշիվների հրապարակման օրերն են՝ յուրաքանչյուր ամսի 8-9, հաշվապահական հաշվեկշռի փակման և հանձնման օրն է՝ յուրաքանչյուր ամսի 2-ը: Ֆինանսական հոսքերի կառավարումը և տնօրինումը մասնաճյուղերում դեռևս չի փոխվում, սակայն հետագայում նախատեսվում է այն կազմակերպել կենտրոնացված՝ Գլխամասային գրասենյակում,
- Մասնաճյուղերում ժամանակավորապես դադարեցվում է նոր աշխատակիցների ընդունման գործընթացը, այն պետք է պարտադիր կատարվի Գլխամասային գրասենյակի կողմից՝ Անվտանգության և վերահսկողության տնօրինության հսկման ներքո (նույնը՝ նյութական պատասխանատուների նշանակման պարագայում): Աշխատակիցների ներքին տեղաշարժը իրականացվում է մասնաճյուղերի կողմից ինքնուրույն,
- Ընկերության բոլոր ավտոտրանսպորտային միջոցների վրա (տեխնիկապես հնարավոր լինելու դեպքում) տեղադրվելու են գազաբալոնային սարքավորումներ,
- Անտառահատումների կազմակերպման հարցը Հայաստանի Հանրապետությունում ներկայումս կանոնակարգված է 3 նախարարների համատեղ հրամանով, որով և հարկավոր է առաջնորդվել աշխատանքների կատարման ժամանակ,
- Մոտ ապագայում ՀՀ կառավարության կողմից ենթադրվում է ընդունել որոշում, որը կկանոնակարգի Ընկերության գործողությունները էլեկտրաէներգիայի գողության դեպքերի հայտնաբերման պարագայում:

Գլխավոր տնօրենի տեղակալ, Տեխնիկական տնօրեն Դ. Գրիգորյանին.

- Մասնաճյուղերին անհրաժեշտ է ավելի սերտ համագործակցել Տեխնիկական և Իրացման տնօրինությունների հետ ուրվակաների ճշգրտման աշխատանքներում:
- Մասնաճյուղերի սեփական ուժերով կատարվող սպառողների տեխնոլոգիական միացումների յուրաժամ և պատշաճ կատարման անհրաժեշտությունից ելնելով՝ անհրաժեշտ է տրամադրել Տեխնիկական տնօրինությանը պահանջվող գործիքների ցանկ, որը կներկայացվի կենտրոնացված գնման:

Գլխավոր տնօրենի տեղակալ, Իրացման տնօրեն Ա. Թոխունցին.

- Տեխնոլոգիական գերկորուստների բացառման նպատակով անհրաժեշտ է կարճ ժամանակահատվածում ճշգրտել ուրվակաները ինչպես ցածր, այնպես էլ միջին և բարձր լարման ցանցում:

Գլխավոր տնօրենի տեղակալ, Անվտանգության և վերահսկողության տնօրեն Կ. Հայրապետյանին.

- Անվտանգության և վերահսկողության տնօրինությունը կատարում է գործող պայմանագրերի համապատասխան ուսումնասիրությունները՝ փոխկապակցված օղակների, աշխատանքների արժեքների գերազանցման դեպքերի հայտնաբերման ուղղությամբ: Նմանատիպ բոլոր դեպքերը Շնկերությունում այսուհետ խիստ վերահսկողության տակ են:

Գլխավոր տնօրենի տեղակալ, Ընդհանուր հարցերով տնօրեն Ս. Պողոսյանին.

- Մասնաճյուղերը պետք է ներկայացնեն իրենց ենթակայության տակ և շահագործման ներքո գտնվող այն տրանսպորտային միջոցների ցանկը, որոնց վրա տեխնիկապես հնարավոր է տեղադրել գազաբալոնային սարքավորում:

“Դեբեդ” մասնաճյուղի տնօրեն Գ. Սարգսյանին.

- Մասնաճյուղում առկա հորատող մեքենաները հին են և շատ արագ շարքից դուրս են գալիս, այս իսկ պատճառով USU աշխատանքների կատարումը որոշակիորեն ձգձգվում է:
- Մասնաճյուղը մի շարք խնդիրներ ունի կապված անտառահատումների կատարման, դրանց դիմաց վճարման և փայտանյութի իրացման հետ:
- Տեխնոլոգիական կորուստների մասով կատարվում են բոլոր անհրաժեշտ ճշգրտումները, ճշգրտվում են ուրվակաները:

- Մասնաճյուղի տարածքում կուտակվել են շարքից դուրս եկած տրանսֆորմատորներ, որոնք ենթակա չեն նորոգման:
- Մասնաճյուղի հաշվեկշռում է դեռևս հաշվառվում “Վանաձորի թիվ 2 հիվանդանոց” ՊՓԲԸ շենքը (4 տող), որը կառավարության որոշմամբ փաստացի օտարվել է:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Գ.Սարգսյանին՝ անթույլատրելի համարել կորուստների ընդհանուր մակարդակը՝ մասնավորապես Վանաձոր էլեկտրացանցում: Վիճակը չշտկվելու դեպքում կկիրառվեն խստագույն վարչական միջոցներ:
2. “Թումանյան” էլ. ցանցի պետին հայտարարել խիստ նկատողություն կորուստների ցուցանիշները չկատարելու համար:
3. Գ. Ղազարյանին՝ սեղմ ժամանակահատվածում կատարել էլեկտրական ուրվակների բոլոր ճշգրտումները՝ համագործակցելով մասնաճյուղերի հետ:
4. Գ. Սարգսյանին՝ սեղմ ժամկետներում նշանակել “Վանաձոր” և “Գուգարք” էլ ցանցերի պատասխանատուներին (+1 պատասխանատու անձ):
5. Դ. Գրիգորյանին՝ ուսումնասիրել և քննարկել Հանրապետության հյուսիսային տարածաշրջանում սարքավորումների վերանորոգման կետի ստեղծման հարցը:
6. Ս. Պողոսյանին՝
 - 6.1. մանրամասն ուսումնասիրել տրանսպորտային միջոցների և հատուկ տեխնիկայի աշխատանքի հետ կապված հարցերը, անհրաժեշտության դեպքում կազմակերպել դրանց վերանորոգումը:
 - 6.2. առաջնահերթ կազմակերպել USU՝ աշխատանքների համար անհրաժեշտ գործիքների և անվտանգության միջոցների ձեռքբերումը և տրամադրումը մասնաճյուղերին: Ժամկետը՝ 26.10.2015թ.
7. Վ. Բուռնազյան և “ՏՎԳ” իրավաբանական գրասենյակին՝ ուսումնասիրել “Վանաձորի թիվ 2 հիվանդանոց” ՊՓԲԸ շենքի պատկանելիության հարցը և սեղմ ժամանակահատվածում տալ անհրաժեշտ լուծումները:
8. Վ. Գսպոյանին և Ա. Վասիլյանին՝ սեղմ ժամկետներում կատարել 2015 թվականի օգոստոսի 31-ի թիվ 1030-Ն կառավարության որոշման մեջ փոփոխությունների հետ կապված բոլոր անհրաժեշտ աշխատանքները քիլինգային համակարգի համապատասխանեցման մասով՝ բացառելով բնակչությանը ներկայացված հաշիվների հնարավոր անճշտությունները:
9. Վ. Գսպոյանին և Դ. Գրիգորյանին՝ սեղմ ժամկետներում մշակել և ստանդարտ աշխատանքների կատալոգում ավելացնել անվտանգության տեխնիկայի

կանոնների պահպանման/համապատասխանելիության մասը և պարտադիր կարգով կցել այդ թերթիկը կարգազրին:

10. “ՏՎԳ” իրավաբանական գրասենյակին՝ պատրաստել հրամանի նախագիծ՝ սույն արձանագրության հիման վրա:

11. Ն. Սարջանյանին՝ կազմակերպել արձանագրության և ժողովի լուսանկարների տեղադրումը Ընկերության պաշտոնական կայքում:

Կատարող՝ Դ. Մանուկյան